ՀԱՀ Սպառողների վստահության համաթիվ

Սպառողների վստահությունն աճել է 2023թ. առաջին եռամսյակում

Սպառողների գնահատականները ընթացիկ իրավիճակի վերաբերյալ վատթարացել են: Սպասումները դրական են:

Սպառողների վստահությունը, ինչպես նախորդ եռամսյակում էր, 2023 թվականի առաջին եռամսյակում ևս բարելավվել է: ՀԱՀ Սպառողների վստահության համաթիվն այժմ կազմում է 113.5 (վերջինիս արժեքը 2021 թվականի չորրորդ եռամսյակում 100 է)՝ 2022 թվականի չորրորդ եռամսյակի 108.3-ի համեմատ: Այս բարելավումը պայմանավորված է բացառապես Ապագա իրավիճակի համաթվով: Վերջինս նախորդ եռամսյակի համեմատ աճել է մոտ 10 տոկոսով: Ապագա իրավիճակի համաթվի բարելավման հիմքում ապագա ֆինանսական վիճակի և զբաղվածության պայմանների վերաբերյալ սպառողների դրական ակնկալիքներն են: Միևնույն ժամանակ, Ներկա իրավիճակի համաթիվը նվազել է 1 տոկոսով՝ պայմանավորված գնումներ կատարելու հանգամանքով և ֆինանսական վիճակի վերաբերյալ սպառողների ընթացիկ գնահատականների՝ մոտ 5 տոկոս անկումով:

Ինչ վերաբերում է Սպառողների վստահության հաշվեկշռի միավորին, ապա սպառողների վստահությունը, չնայած արձանագրած բարելավմանը, դեռևս մնում է ցածր: Ներկա իրավիճակի մնացորդը կազմում է 0.40, որը ցածր է 0.45-0.55 կայունության միջակայքից: Ապագա սպասումները ընդհանուր առմամբ կայուն են. վերջինիս հաշվեկշիռը կազմում է 0.46: Սպառողները հիմնականում ունեն լավատեսական սպասումներ զբաղվածության պայմանների և ֆինանսական հեռանկարի վերաբերյալ: Ապագա գնումների հեռանկարը, չնայած նախորդ եռամսյակում արձանագրած բարելավմանը, դեռևս մնում է ցածր:

Գծապատկեր 1. ՍՎՀ բաղադրիչների փոփոխությունը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ



Գծապատկեր 2. Սպառողների վստահության համաթիվ



Գծապատկեր 2-ն արտացոլում է սպառողների վստահության համաթվի վեց բաղադրիչների արժեքները և համապատասխան կայունության միջակայքերը՝ ներկայացված ստորին և վերին հավասարակշռության սահմանագծերով: Ստորին սահմանագծից ներքև և վերին սահմանագծից վերև գտնվում են համապատասխանաբար հոռետեսական և լավատեսական գնահատականները:

Սպառողների վստահության հարցման մեթոդաբանություն

Սպառողների վստահության հարցումն արտացոլում է սպառողների տեսակետներն ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի և հաջորդ եռամսյակի հավանական զարգացումների վերաբերյալ: Հարցման պատասխաններից դուրս բերված համամասնությունները հիմնված են սպառողի սուբյեկտիվ գնահատականների, ինչպես նաև ընթացիկ և ապագա գնումների վարքագծի վրա:

Սպառողների վստահության հետազոտությունը կազմվել է միջազգայնորեն ընդունված մոտեցման միջոցով, որը միավորում է երկու ենթահաշիվներ՝ ներկա իրավիճակի հաշվեկշիռ (հիմնված տնային տնտեսությունների կողմից իրենց ընթացիկ ֆինանսական վիճակի, գնումների վարքագծի, երկրի ներկայիս տնտեսական պայմանների գնահատման վրա) և ապագա ակնկալիքների հաշվեկշիռ (հիմնված սպառողների՝ կարճաժամկետ հեռանկարում ֆինանսական իրավիճակի ապագա ֆինանսական վիճակի, գնումներ կատարելու մտադրությունների և աշխատաշուկայի պայմանների համար): Հետագա եռամսյակային միավորների փոփոխություններն այնուհետև ներկայացվում են որպես Սպառողների վստահության համաթիվ: Մեթոդաբանության տեղայնացման գիտական փորձարկումից հետո ՀԱՀ-ի Փոլ Ավետիսյան անվան Գործարարության հետազոտությունների և զարգացման կենտրոնը 2022 թվականից հարցումներ է հրապարակում Հայաստանում սպառողների ազգային ներկայացուցչական խմբին (պանելին) եռամսյակային սպառողների դինամիկ Սպառողների վստահության համաթվի հրապարակման համար: Հարցումները կատարվում են հեռախոսով՝ պանելի 2000-ից ավելի մասնակիցներից, որոնք ներկայացուցչական են ՀՀ համար սեռատարիքային և տարածքային (այդ թվում՝ գյուղական և քաղաքային բնակչության) տեսակետից: Որպես բազային արժեք մենք ընտրել ենք Սպառողների վստահության հաշվեկշիռը 2021 թվականի չորրորդ եռամսյակում:

Հարցերի համար, խնդրում ենք այցելել https://cbe.aua.am/cbrd/# , ինչպես նաև զանգահարել **+374 60 61 2607** հեռախոսահամարով: